ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

## 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

## DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
## Challenges and Opportunities of 21st Century

## РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
## вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

*Հրատարակվում է*
*ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

***Խմբագրական խորհուրդ՝***

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
**ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և**
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

*Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,*

*շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:*

*Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:*

*Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:*

*Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:*

*Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:*

*Շնորհակալ եմ ուշադրության համար:*

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր*

**ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*
**ԳԱԳԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

# ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Հիմնաբառեր.* *ձեռնարկություն, մեխանիզմ, բնապահպանական, տնտեսական, արդյունավետություն, գործունեություն, մենեջմենթ, պատասխանատվություն*

*Հոդվածում դիտարկվել են ՀՀ արդյունաբերական ձեռնարկությունների բնապահպանական գործունեության արդյունավետության բարձրացման տնտեսական հիմնահարցերը: Ներկայացվել են ձեռնարկությունների բնապահպանական վարքագծի փոփոխությունների տնտեսական ուղիները: Հիմնավորվել է ձեռնարկություններում էկոմենեջմենթի համակարգի ներդրման անհրաժեշտությունը էկոտնտեսական կարգավորման նոր պայմաններում:*

Արտադրական ձեռնարկության բնապահպանական գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություններից մեկը ներկայումս բնապահպանական մենեջմենթի համակարգի ներդրումն է:

Բնապահպանական մենեջմենթը կազմակերպության (ձեռնարկության) գործունեության կառավարման այնպիսի համակարգ է, որն ուղղակի կամ անուղղակի առնչություն ունի արտաքին միջավայրի փոխհարաբերությունների հետ: Բնապահպանական մենեջմենթի օբյեկտ են համարվում ձեռնարկության գործունեության՝ թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների բնապահպանական կողմերը: Կառավարելով այս ուղղությունները՝ կազմակերպությունը, իհարկե, չի կարող ազդեցություն (դրական կամ բացասական) չթողնել արտաքին միջավայրի և դրա ռեսուրսների վրա: Բիզնես գործունեության՝ արտաքին միջավայրի նկատմամբ բացասական փոխազդեցությունների նվազեցումը և արտադրական գործընթացների էկոլոգիական բարձր մակարդակի ապահովումը բնապահպանական մենեջմենթի վերջնական նպատակներն են: Միաժամանակ, տվյալ խնդիրների իրականացումն անհրաժեշտ է համապատասխանեցնել կազմակերպության այլ առաջնային նպատակների կատարմանը՝ ապահովելով ընթացիկ և երկարաժամկետ մրցունակություն:

Ժամանակակից պատկերացումների տեսանկյունից, բնապահպանական մենեջմենթը կարելի է սահմանել որպես կազմակերպության (ձեռնարկության) կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս, որն իրագործում է մրցունակության ապահովման խնդիր՝ ապահովելով տվյալ ոլորտի էկոլոգիական պահանջները:

Հետաքրքրություն է առաջացնում բնապահպանական մենեջմենթի ևս մեկ հատկա-

նիշ: Դա մեծացնում է կառավարչական գործունեության սահմանները և նպատակները՝ ընդգրկելով արտաքին միջավայրի մարտահրավերները[1]: Առաջին հերթին, այս մոտեցմամբ բնապահպանական խնդիրները չեն տարբերվում բիզնես գործունեության այլ կողմերից, իսկ երկրորդ հերթին, բնապահպանական հետևանքները, ծախսերը և այլն դառնում են բիզնեսի բաղկացուցիչ մասեր:

XX դարի 90–ական թվականներին՝ կորպորատիվ բնապահպանական մենեջմենթի զարգացման ժամանակաշրջանում, առավել էական ազդեցություն էին թողնում նեոինստիտուցիոնալ և նորինստիտուցիոնալ տեսությունները (ստեյկհոլդերների, պրինցիպալ–գործակալների, ցանցային կառուցվածքների, ռիսկի վերլուծության, ինչպես նաև կայուն զարգացման):

Ստեյկհոլդերները, որպես շահագրգիռ կողմեր, ֆիզիկական անձինք, կազմակերպություններ են, որոնք իրավունք ունեն իրավական, տնտեսական, բարոյական տեսանկյուններից ներկայացնելու իրավունքներ կամ շահեր՝ կապված համակարգի և դրա ունեցվածքի հետ, որը բավարարում է իրենց կարիքները: Այս տեսությունը շարունակում է զարգանալ: Գերմանացի գիտնական Հ.Դյուկհոֆն առաջարկել է ստեյկհոլդերների դասակարգման հետաքրքիր մոտեցում (աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

***Ստեյկհոլդերների դասակարգումն ըստ Հ.Դյուկհոֆի***

| Կիրառման պատրաստություն | Ազդեցության ներուժ | |
|---|---|---|
| | Ոչ էական | Էական |
| **Բարձր** | Տեսակ Ա. աջակցող (supportive) – ֆիրմայի անձնակազմ, արհմիություններ, մատակարարներ | Տեսակ Բ. խառնված (mixed blessing) – բաժնետերեր, ներդրողներ, մենեջերներ, սպառողներ, բանկեր, ապահովագրողներ |
| **Ցածր** | Տեսակ Գ. առավելագույն (marginal) – մրցակիցներ, բնակչություն, համալսարաններ և գիտական հանրություն | Տեսակ Դ. ոչ աջակցող (nonsupportive) – ՁԼՄ, պետություն, ոչ ձևական միավորում |

Բնապահպանական մենեջմենթի համակարգի ձևավորման ժամանակ ստեյկհոլդերների տեսությունը չի տալիս պատրաստի ուղղորդություններ: Ներկայումս ձևավորվել են մի շարք հետաքրքիր մոտեցումներ, որոնք վերլուծում են էկոլոգիական խնդիրների ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա՝ զարգացնելով բնապահպանական մենեջմենթի տեսությունը:

Դրանց շարքին են դասվում հետևյալ մոտեցումները.

- մարդակենտրոն, որի շրջանակներում ուշադրություն է դարձվում ձեռնարկատերերի և մենեջերների բնապահպանական պատասխանատվությանը, որն ուղղված է պայմանների երկարաժամկետ ապահովմանը բիզնեսի ու հասարակության պահանջմունքների բավարարման համար,
- ֆինանսատնտեսական, որի դեպքում բնության պահպանման նպատակների իրականացումը կազմակերպության կողմից վերլուծության է ենթարկվում մշակե-

[1] Бабина Ю. В., Варфоломеева Э. А., Экологический менеджмент. М.: “Перспектива”, 2007, с. 58.

լով մրցունակ ռազմավարություններ,

- բնապահպանական մենեջմենթը՝ որպես որակի և ապահովության կառավարման համակարգի ֆունկցիա,
- կենսաբանական:

Կորպորատիվ բնապահպանական մենեջմենթին բնորոշ էկոլոգիական խնդիրների գումարային հաշվարկին փոխարինելու համար, նախնական փուլում, կիրառվում է ձեռնարկատիրական գործունեության նոր ուղղություն, որը հիմնվում է կայուն զարգացման սկզբունքի վրա: Այս ուղղությունների միջև տարբերությունը ներկայացված է աղյուսակ 2–ում[1]: Բնապահպանական մենեջմենթի համակարգերի ձևավորման ժամանակ առաջանում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են թափոնների վերամշակմանը, հումքի երկրորդական օգտագործմանը, արտադրության որակի և ապահովության բարձրացման համակարգերի ներդրմանը, արտաքին միջավայրի պահպանմանն ուղղված կառավարման, ինչպես նաև էկոլոգիական աուդիտի կազմակերպմանը: Ձեռնարկությունում, հիմնականում, փորձ է արվում կիրառելու բնապահպանական մենեջմենթն արդեն գործող կառավարման համակարգում:

*Աղյուսակ 2*

***Ձեռնարկատիրական գործունեության ուղղությունների փոփոխություն***

| *Յուցանիշներ* | *Ուղղվածություն (պարադիգմա)* | |
|---|---|---|
| | *Ձեռնարկության կառավարում՝ հաշվի առնելով էկոլոգիական խնդիրները* | *Ձեռնարկության կառավարում՝ ուղղված կայուն զարգացման պահանջներին* |
| ***Ընդհանուր բնութագիր*** | «Քիչ, քան...» | «Այնքան, որքան պետք է» |
| ***Բնապահպանական վնասի բնութագիր*** | Հասցված | Ակնկալվող |
| ***Փոխըմբռնում*** | Ֆիզիկական | Մտավոր |
| ***Գործողությունների պարամետրեր*** | Նյութական էմիսիա | Ոչ նյութական էմիսիա |
| ***Հասարակական հետաքրքրության օբյեկտներ*** | Էմիսիա՝ որպես գործընթացների և արտադրանքների հետևանք | Գործընթացներ և արտադրանքներ՝ որպես կյանքի ոճի հետևանք |
| ***Հաջողության նախապայմաններ*** | Էկոարդյունավետ | Բավականություն |
| ***Ուղղվածություն*** | Կապիտալի սեփականատերերին (share-holders) | Հետաքրքրված անձանց/խմբերին (stakeholders) |
| ***Նախաձեռնողներ*** | Պետական մարմիններ | Ոչ պետական մարմիններ |

Կառավարչական համակարգի հնարավորությունները սահմանափակված են, եթե կիրառվող կառուցվածքները խոչընդոտում են անհրաժեշտ քաղաքականության ներդրումը: Յուրաքանչյուր ձեռնարկություն պարտավոր է հաշվի առնել էկոլոգիական պահանջ-

[1] Магомадова Т.Л., Косякова И.В., Оптимизация производственно-хозяйственной деятельности промышленного предприятия с учетом эколого -экономического анализа // Вестник Самарского государственного университета (гуманитарная серия), №9 (90): СамГУ, 2011.

ները, այլ կերպ ասած, արտաքին միջավայրի պահպանությունը պետք է հուսալի կերպով ներառված լինի ձեռնարկության կառավարչական համակարգում:

Ի Վերջո, բնապահպանական մենեջմենթի նպատակն է նվազեցնել բիզնես գործունեության բացասական ազդեցություններն արտաքին միջավայրի վրա, ապահովել արտադրական գործընթացների անվտանգության բարձր մակարդակ:

Բիզնեսի կայացման հիմքում երեք փոխկապակցված խնդիրներ են. առաջին հերթին՝ կորպորատիվ մրցունակություն (Corporate Competitiveness), երկրորդ հերթին՝ կորպորատիվ ղեկավարության որակավորման բարձրացում (Corporate Governance) և երրորդ՝ ձեռնարկությունների կողմից քաղաքացիների սոցիալական պատասխանատվության գործառույթների իրականացում: Բիզնեսի սոցիալական պատասխանատվություն ասելով ներկայումս հասկացվում է բիզնեսի սուբյեկտների կողմից այն նորմերի և կանոնների պահպանությունը, որոնք որոշված են օրենսդրությամբ, ազդում են առանձին սոցիալական խմբերի և ամբողջ հասարակության կյանքի մակարդակի վրա: Այս խնդիրներից վերջինը ամրապնդվեց քաղաքակիրթ բիզնեսի սկզբունքներից մեկի ձևավորմամբ, տվյալ դեպքում ի նկատի ունենք կորպորատիվ քաղաքացիության սկզբունքը (Corporate Citizenship): Այս հասկացությամբ, ինչպես նշում են արտասահմանյան մասնագետները, էկոլոգիան՝ նույնկերպ, ինչպես որակի բարձրացումը և ինովացիաների իրագործումը, առաջատար ուղղություններից է մրցակցային պայքարում: Ռազմավարական բնապահպանական մենեջմենթը, որը ներառվում է արտադրական ձեռնարկության ռազմավարական համակարգում, կոչված է հայտնաբերելու էկոլոգիական բնույթի հեռանկարներ:

Բնապահպանական մենեջմենթը ընդունված է վերլուծել որպես «ռազմավարական մենեջմենթ» հասկացության մի մաս և ներառել ժամանակակից անվնաս արտադրության գաղափարի մեջ, որի դեպքում հնարավոր է հասնել էկոլոգիական և տնտեսական օպտիմալ ցուցանիշների հարաբերակցության[1]: Ձեռնարկատիրական գործունեության արտաքին միջավայրի նկատմամբ բացասական երևույթների նվազեցման, արտադրական գործընթացների բարձր էկոլոգիական անվտանգության սահմանման խնդիրները համարվում են բնապահպանական մենեջմենթի հիմնական նպատակները: Միաժամանակ, տվյալ խնդիրների իրագործումը պետք է համաձայնեցված լինի կազմակերպության այլ նպատակների բարեհաջող իրականացման հետ: Էկոլոգիական մենեջմենթ վարելու հայեցակարգի ժամանակակից գաղափարը նրանում է, որ բիզնեսը բաղկացած է ոչ միայն տնտեսական զարգացման գործոններից, այլև կրում է սոցիալական և բնապահպանական պատասխանատվություն:

Ռազմավարական մենեջմենթի ոլորտում մեր կատարած վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ միտումները.

1. Ռազմավարական մենեջմենթի անփոխարինելի մաս է բնապահպանականը, որի միջոցով ձեռնարկության մրցունակության առավելությունները պայմանավորված են բիզնեսի էկոլոգիական պատասխանատվության մակարդակով:

[1] Диксон Д., Скура Л., Карпентер Р., Шерман П., Экономический анализ воздействий на окружающую среду / М.: Изд-во «Вита-Пресс», 2010, с.184.

2. Ձեռնարկության ռազմավարական մենեջմենթը, ընդհանուր առմամբ, հավասարակշռված բնօգտագործման սահմանաչափերի զարգացման միտում ունի: Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում իրագործելու բիզնեսի համար կարևոր սկզբունքներ, որոնցից են.
   - ձեռնարկության տեխնոլոգիական բազայի դինամիկ զարգացումը,
   - բնապահպանական վճարների մասով ծախսերի նվազեցումը,
   - բարձր արդյունավետությամբ ներդրումային քաղաքականության պլանավորումը,
   - ձեռնարկության զարգացման սցենարների կանխատեսումը՝ հիմք ընդունելով էկոլոգիական ռազմավարական մենեջմենթը:

Մինչև հիմա ձեռնարկության կառավարման ռազմավարության ձևավորման հիմնական խնդիրն է երկարաժամկետ բնապահպանական զարգացման հայեցակարգերի կիրառությունը: Ակնհայտ է, որ ներկա պայմաններում արտադրական ձեռնարկության կառավարումը ռազմավարական մենեջմենթի շրջանակներում կարևորագույն հիմք է՝ առանց որի հնարավոր չէ իրականացնել ձեռնարկատիրության հիմնական առաքելությունը:

**АЙК АКОПЯН**
**ГАГИК АГАДЖАНЯН**

## ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРИРОДООХРАННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕДПРИЯТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

***Ключевые слова:*** *предприятие, механизм, экологическая, экономическая, эффективность, деятельность, менеджмент, ответсвеннность*

*В статье рассмотрены экономические проблемы нынешнего состояния природоохранной деятельности промышленных предприятий, повышения ее эффективности. Представлены экономические пути изменения природоохранного поведения предприятий. Была обоснована необходимость внедрения в предприятия системы экоменеджмента в новых условиях эколого-экономического регулирования предприятия.*

**HAYK HAKOBYAN**
**GAGIK AGHAJANYAN**

## PROBLEMS OF INCREASING THE EFFICIENCY OF THE ENTERPRISE'S ENVIRONMENTAL ACTIVITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

***Key Words:*** *enterprise, mechanism, ecological, economic, efficiency, activity, management, responsibility*

*The article deals with the economic problems of the current state of environmental activities of industrial enterprises, increasing its effectiveness. Economic ways of changing the environmental behavior of enterprises are presented. The necessity of introducing the system of eco-management in new conditions of environmental and economic regulation of the enterprise was justified.*